

Հաստատված է  
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի  
«27» հունիսի 2014 թ. թիվ 67 նիստում  
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն  
Ա. Սարգսյան



**Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**  
**ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ**  
**ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ**  
**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ**

Երևան 2014

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) մագիստրատուրայի պրոֆեսորադասախոսական անձնակազմի (այսուհետ՝ ՊԴԱ) որակավորումն ու վերապատրաստումը (այսուհետ՝ ԴԱՈՎ) իրականացվում է ՀՀ Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին օրենքի 19 հոդվածի դրույթներին համապատասխան և սույն կանոնակարգի հիման վրա: ԴԱՈՎ-ը գործընթաց է, որի միջոցով կազմակերպվում և իրականացվում է Կենտրոնի դասախոսական անձնակազմի ինովացիոն կրթական ծրագրերով լրացուցիչ մասնագիտական կրթությունը: ԴԱՈՎ գործընթացը ներառում է ծրագրեր, որոնք նախատեսված են տեսական և գործնական մեթոդների կիրառմամբ կազմակերպել դասախոսների վերապատրաստումը և որակավորումը:

ԴԱՈՎ Ծրագրի նպատակն է Կենտրոնի դասախոսական անձնակազմին տրամադրել համապատասխան շարունակական և լրացուցիչ մասնագիտական կրթություն, մասնավորապես՝ բարձրացնել ՊԴԱ մասնագիտական հմտությունները և կարողությունները, զարգացնել և խորացնել տեսական և գործնական գիտելիքները, արդիականացնել գիտամանկավարժական, հետազոտական, համակարգչային հմտությունները և կարողությունները՝ սվյալ ժամանակահատվածում բարձրագույն կրթության չափանիշներին համապատասխան:

## 2. ԴԱՈՎ ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- 2.1. ՊԴԱ որակավորման բարձրացման կազմակերպման և անցկացման գործընթացը իրականացվում է բարձրագույն կրթության բարեփոխումների ծրագրի համապատասխան:
- 2.2. Ծրագրի խնդիրներն են՝
  - 2.2.1. դասավանդման որակի և մեթոդիկայի բարձրացումը,
  - 2.2.2. մասնագիտական ոլորտում նորագույն տեխնոլոգիաների հմտությունների ձեռքբերումը և կիրառումը,
  - 2.2.3. մասնագիտական ոլորտում գիտական նոր հետազոտություններին իրազեկվելը,
  - 2.2.4. լրացուցիչ կրթության կատարելագործումը վերապատրաստումների, սեմինարների և գիտաժողովների կազմակերպման միջոցով,
  - 2.2.5. հեռավար ուսուցման մեթոդների կիրառմամբ դասընթացների կազմակերպումն ու անցկացումը,

- 2.2.6. մասնագիտական ծրագրերի, նախագծերի, փաստաթղթերի և նյութերի պատրաստման նպատակով գիտական հետազոտություններ անցկացումը,
- 2.2.7. անհատական ծրագրերով ՊԴԱ որակավորման բարձրացումը՝ կազմակերպված այլ կրթահամալիրներում, ամբիոններում, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների ծրագրերի շրջանակներում, բարձր որակավորում ունեցող մասնագետների և օտարերկրյա դասավանդողների մասնակցությամբ,
- 2.2.8. ծրագրերի և ուսումնամեթոդական ձեռնարկների մշակում՝ ՊԴԱ որակավորման բարձրացման և վերապատրաստման համար,
- 2.2.9. մասնագետների հմտությունների (գիտամանկավարժական մեթոդիկայի, հոգեբանական և այլն) ձևավորումը, առարկայական ծրագրերի, ուսումնամեթոդական փաթեթի, գնահատման ձևերի նորացումն ու արդիականացումը:
- 2.3. Կենտրոնը ԴԱՈՎ Ծրագրի խնդիրների իրականացման նպատակով իրավասու է համագործակցել և խորհրդատվական գործունեություն իրականացնել ՀՀ այլ բուհերի և կրթահամալիրների հետ:

### **3. ԴԱՈՎ ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

- 3.1 ԴԱՈՎ Ծրագիրը կազմակերպում է ԳԿՄԿ-ն:
- 3.2 ԳԿՄԿ յուրաքանչյուր դասախոս պարտավոր է ոչ պակաս, քան հինգ տարին մեկ անցնել վերապատրաստում կամ որակավորման բարձրացում՝ ըստ սահմանված տարակարգերի. պրոֆեսոր, դոցենտ՝ մասնագիտական և/կամ հետազոտական որակավորում, այնուհետև՝ ավագ դասախոս, դասախոս՝ բարձրագույն մասնագիտական կուրսեր և/կամ մասնագիտական վերապատրաստում և որակավորման բարձրացում:
- 3.3 ԴԱՈՎ Ծրագրի իրականացման ժամկետը հինգ տարի է (2014-2019 թթ.): Սահմանված ժամկետի ընթացքում դասախոսը անհատական պլանով պարտավորվում է կատարել Ծրագրի պահանջները՝ աստիճանաբար կուտակելով սահմանված կրեդիտների քանակը:
- 3.4 Ծրագրի հնգամյա բեռնվածությունը կազմում է 30 կրեդիտ, որից 7-ը առարկայական կարողությունների զարգացման կառուցամասի մոդուլներն են, 6 կրեդիտը՝ դասավանդման հմտությունների զարգացման կառուցամասի մոդուլներն են, 15 կրեդիտը՝ հետազոտական կարողությունների զարգացման

- կառուցամասի մոդուլներն են: Ծրագրում 2 կրեդիտ հատկացվում է ամփոփիչ ատեստավորմանը՝ գիտական հաշվետվության ներկայացմամբ:
- 3.5 Կենտրոնի ԴԱՈՎ Ծրագիրը իրականացվում է աշխատանքին զուգընթաց կամ արտադրությունից կտրված:
- 3.6 ԴԱՈՎ գործընթացը կազմակերպվում է Կենտրոնի համապատասխան մասնագիտությունների ամբիոններում մշակված և գիտական խորհրդում հաստատված որակավորման բարձրացման դասընթացների համար սահմանված ուսումնական պլաններով և ծրագրերով:
- 3.7 Ծրագրի կատարման վերահսկողությունը վերապահված է ամբիոններին, որոնք յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին Ծրագրի կատարման հաշվետվություն են ներկայացնում Կենտրոնի գիտխորհուրդ:
- 3.8 ՊԴԱ պարտադիր լսարանային շաբաթական ծանրաբեռնվածությունը սահմանվում է հաստատված ուսումնական պլաններով:
- 3.9 Դասընթացների աշխատանքային լեզուն հայերենն է:

#### **4. ԴԱՈՎ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ և ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

- 4.1 ՊԴԱ դասընթացների ժամանակացույցը և ուսումնական ծրագրերը ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի երկրորդ շաբաթվա վերջին օրը տեղադրվում են Կենտրոնի կայքէջում, ինչպես նաև ուղարկվում են համապատասխան ամբիոններ:
- 4.2 Կենտրոնի դասախոսը, համաձայն ժամանակացույցի, ընտրում է նախընտրած դասընթացը /դասընթացները/ և կիսամյակի երկրորդ շաբաթվա ընթացքում Կրթության որակի ապահովման բաժին ներկայացնում Ծրագրին մասնակցության հայտ՝ էլեկտրոնային ձևով կամ այլ կրիչով, որի գրանցումն իրականացվում է Կենտրոնի գործավարության կարգին համապատասխան:
- 4.3 Հայտարարված դասընթացը կազմակերպվում է, եթե որպես ունկնդիր մասնակցության հայտ են ներկայացրել առնվազն 5 դասախոս: Կենտրոնի տնօրենի հրամանով կազմավորվում և հաստատվում են խմբեր, որից հետո Կենտրոնի փոխտնօրենի կամ ուսումնամեթոդական մասի պետի կողմից սահմանվում է դասընթացների ժամանակացույցը: Հաստատված խմբերի կազմը և ժամանակացույցը տեղադրվում է Կենտրոնի կայքէջում: Ժամանակացույցի և դասընթացների վերաբերյալ տեղեկատվություն դասախոսները կարող են ստանալ համապատասխան ամբիոններից: Դասընթացները սկսվում են կիսամյակի հինգերորդ շաբաթից:

- 4.4 Դասալսումներից հետո սկսվում է ատեստավորման փուլը, որն անցկացվում է քննության կամ ստուգարքային ձևով: Դասընթացներին մասնակցած, սակայն ատեստավորում չանցած ունկնդիրը կարող է կրկին հանձնել քննություն կամ ստուգարք՝ սահմանված կրեդիտները լրացնելու համար:
- 4.5 ՀՀ բուհերում, օտարերկրյա գիտակրթական կենտրոններում ԴԱՈՎ ծրագրերով դասախոսի վերապատրաստման արդյունքները ճանաչվում են Կենտրոնի կողմից՝ Ծրագրի համապատասխան բաղադրիչի համար սահմանված կրեդիտների հաշվառմամբ:

## 5. ԴԱՈՎ ԾՐԱԳՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

- 5.1 Կենտրոնի ԴԱՈՎ դասընթացների արդյունքները ամփոփվում են Կենտրոնի գիտական խորհրդի կողմից հաստատված ուսումնական պլանների չափանիշներին համապատասխան:
- 5.2 Դասընթացների արդյունքների ամփոփումը իրականացվում է ատեստավորման միջոցով, որի ընթացքում ստուգվում և գնահատվում են Ծրագրով սահմանված չափանիշների և պահանջների կատարումը:
- 5.3 Ատեստավորման փուլն անցնելուց հետո դասախոսը պատրաստում է հաշվետվություն՝ Ծրագրով սահմանված պահանջների կատարման մասին և ներկայացնում համապատասխան ամբիոն և կրթության որակի ապահովման (ՈԱ) բաժին:
- 5.4 Կենտրոնի Որակի ապահովման բաժինը ԴԱՈՎ իրականացված դասընթացների ամփոփիչ արդյունքների հիման վրա կատարում է համապատասխան վերլուծություններ և ներկայացնում հանձնաժողովին, որի կազմում են Կենտրոնի տնօրենը, փոխտնօրենը, ուսումնամեթոդական մասի պետը, դեկանը, ՈԱ բաժնի պետը և ծրագրի բովանդակային հատվածի պատասխանատու ամբիոնի վարիչը:
- 5.5 ԴԱՈՎ Ծրագիրն ավարտած և ամփոփիչ ատեստավորումն անցած դասախոսին հանձնաժողովի որոշմամբ 10-օրյա ժամկետում տրվում է ԴԱՈՎ Ծրագրի դասընթացի վկայագիր: Ծրագրի ատեստավորումը չանցած դասախոսներին տրվում է ծրագրին մասնակցելու տեղեկանք՝ Ծրագրի պահանջների կատարման համապատասխան ծավալի նշումով: